

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի <<Տանձավերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականություն (10 դասաժամ), դասվար (2 մասնագետ 20 և 20.5 դասաժամ) ռուսաց լեզու (7.5 դասաժամ), անգլերեն (6 դասաժամ), ինֆորմատիկա (1 դասաժամ), աշխարհագրություն (2 դասաժամ), երգ (0.5 ժամ), կերպարվեստ (0.5 ժամ), ֆիզկուլտուրա (4 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ կողմից մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարն կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1). 1 լուսանկար 3*4 չափի.
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ).
3. Անձը հաստատող փաստաթուղթ.
4. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26 հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաներյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճենը առկայության դեպքում
5. Ինքնակենսագրություն (Ձև 5).
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք.
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ.
8. Հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում).
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ.

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սեպտեմբերի 07-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին՝ ժամը 15:00-ին Սյունիքի մարզի Տանձավերի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 40-30-76 հեռախոսահամարով: